

# ՄԱՂՄՈՍ 4

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո վստահության երեկոյան աղոթք <u>MT ներածական</u> «Դավթի սաղմոսը . գլխավոր երաժշտին, լարային գործիքներով»	Հավատարիմների ապահովությունը	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (Ողբ)	Երեկոյան օգնության աղոթք	Երեկոյան աղոթք
4:1	4:1	4:1	4:1	4:1
4:2-3	4:2-3	4:2 4:3	4:2 4:3	4:2 4:3
4:4-5	4:4-5	4:4-5	4:4-5	4:4 4:5
4:6-8	4:6-8	4:6-7 4:8	4:6-7 4:8	4:6 4:7 4:8

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԿՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Աստծուն ուղղված բացման աղոթք՝ Սաղմ. 4:1
- Բ. Անդրադարձ հակառակորդներին՝ Սաղմ. 4:2-3

Գ. Աստծուն պատշաճ պատասխան տալու պատվերներ՝ Սաղմ. 4:4-5

Դ. Աստծուն ուղղված փակման աղոթք՝ Սաղմ. 4:6-8:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### **NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 4:1**

<sup>1</sup> Կանչելուս պահին ինձ լսիր, ո՛վ իմ արդարության Աստված:

Նեղությանս մեջ ինձ ընդարձակեցիր.

Ողորմի՛ր ինձ ու լսի՛ր իմ աղոթքը:

**4:1** Ուշադրություն դարձրե՛ք Աստծուն աղերսելու համար կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ .

1. ինձ լսիր – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 27:7

2. ողորմի՛ր ինձ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 25:16, 69:16

3. լսի՛ր իմ աղոթքը – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 17:6, 39:12

Սաղմոսերգուն ակնկալում է, որ Աստված կլսի իրեն և կգործի (տես՝ Սաղմ. 3:4, 6:8,9, 17:6, 86:7): Աղոթքը միայն խնդրանք չէ, այն հաղորդակցություն է: Մենք նրա կարիքն ավելի շատ ունենք, քան պատասխանված խնդրանքների:

❖ Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է սաղմոսերգուն բնութագրում Աստծուն:

1. Ով իմ արդարության Աստված (տես՝ Հատուկ թեմա. Արդարություն)

2. Ով իմ նեղությունից ազատող Աստված

Այնքան շատ անձնական ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ կան այս առաջին երկու համարներում: ՅԱՀՎԵՆ «արդարության» միակ աղբյուրն է, որը խաղաղություն է բերում (թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր):

**NASB, NKJV**

«հանգստացրեց ինձ»

**NRSV, LXX**

«տեղ տվեց»

**NJB**

«ընդարձակեց»

**JPSOA, REB**

«ազատեց ինձ»

Եբրայերեն բառը (BDB 931, KB 1210, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ընդարձակվելու համար դարձվածք է (տես՝ Սաղմ. 18:19), «սահմանափակման» հակառակը (այսինքն՝ ճնշում, նեղություն, նեղ ընթացք, BDB 865, «նեղություն»): Այս բառի փոխաբերական իմաստը կարելի է տեսնել Ծննդ. 26:22, 2 Օր. 33:20, Սաղմ. 25:17, Ես. 54:2, 57:8-ում:

### **NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 4:2-3**

<sup>2</sup> Մարդկանց որդիներ, մինչև ե՛րբ եք Իմ փառքն ամոթի վերածելու.

Ունայնություն եք սիրելու ու կեղծիք փնտրելու: Մեղա:

<sup>3</sup> Բայց իմացե՛ք, որ ՏԵՐՆ ընտրել է Իր սրբին,

ՏԵՐԸ լսելու է Իրեն կանչելու պահիս:

**4:2** Հեղինակը զարգացնում է անտագոնիստական՝ թշնամական միջավայր, երկու հարցերի միջոցով, որոնք ուղղված են իր հակառակորդներին .

1. ամոթ – BDB 484

2. ունայնություն՝ դատարկ խոսքեր – BDB 938

3. կեղծիք՝ ստեր – BDB 469

Ինչպես որ Սաղմ. 4:1-ում Աստված կոչվում է «իմ արդարությունը», այժմ սաղմոսերգուն կանչում է Նրան, որպեսզի հայտնի սաղմոսերգուին վնաս հասցնողների վերաբերմունքը, շարժառիթները և գործողությունները:

NASB  
NKJV  
NJB

«իմ պատիվը նախատինքի վերածելու»  
«իմ փառքը ամոթի վերածելու»  
«սրտի ծանրություն»

NJB տարբերակը հետևում է LXX-ին, որն ըստ երևույթին թարգմանում է MT-ից տարբերվող այլ եբրայերեն տեքստ: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 165) գնահատում է “C” (կասկածի հավանականությամբ):

❖ «Սելա» Տես Սաղմոս 3:2-ի գրառումը:

**4:3** Ինչպե՞ս պետք է թշնամիները արձագանքեն սաղմոսերգուի Սաղմոս 4:2-ի հարցերին:

1. իմանալ (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), որ Տերը աստվածավախ մարդուն առանձնացրել է (LXX, «հրաշալի բաներ է արել Իր սուրբի համար», տես՝ NJB, NEB) Իր համար (UBS Տեքստային Նախագիծը գնահատում է “A” «շատ բարձր հավանականությամբ»):
2. Տերը լսում է աստվածավախ մարդուն (BDB 339), երբ նա աղոթում է ՅԱՀՎԵՆ գիտի և պատասխանում է Իր ճշմարիտ հետևորդներին: Նրանց վրա հարձակումը նույնն է թե հարձակում Իր վրա:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 4:4-5**

**<sup>4</sup>Դողացե՛ք ու մեղք մի՛ գործեք .**

**Չեր սրտերի հետ խոսեցե՛ք ձեր անկողիններում ու հանդա՛րտ մնացեք: Սելա:**

**<sup>5</sup>Արդարության գոհե՛ր մատուցեք ու ձեր հույսը ՏԻՐՈՋ վրա դրեք:**

**4:4-5** Գոյություն ունի հրամանների՝ պատվերների մի շարք, որով սաղմոսերգուն խորհուրդ է տալիս իր թշնամիներին (այսինքն՝ «մարդկանց որդիներին», Սաղմ. 4:2) թե ինչպես ապրեն .

1. դողացե՛ք – BDB 919, KB 1182, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. մեղք մի՛ գործեք – BDB 306, KB 305, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. խորհե՛ք (բառացի՝ խոսեք) – BDB 55, KB 65, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 77:6
4. հանդա՛րտ մնացեք – BDB 198, KB 226, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. գոհե՛ր մատուցե՛ք – BDB 256, KB 261, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. հույսը ՏԻՐՈՋ վրա դրե՛ք – BDB 105, KB 120, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 37:3, 62:8

**4:4** Վերը նշված երկրորդ կետը մեջբերվում է Պողոսի կողմից Եփես. 4:26-ում 2 Օր. 24:15-ի հետ համադրված, որպես՝ «բարկացե՛ք, *սակայն* մեղք մի՛ գործեք», որը LXX-ից է: MT տալիս է «դողացե՛ք», որն արտահայտում է «վախենալ» (տես՝ Ես. 32:11, Միքիա 7:17, Ամբ. 3:16), ոչ թե բարկություն:

❖ «**հանդա՛րտ մնացեք**» Այս բառն (BDB 198, KB 226) ունի մի քանի կիրառություն .

1. պատերազմում վախ – Ելից 15:14-16
2. դատաստանի մեջ խոսքից զուրկ – 2 Թագ. 2:9
3. մահվան մեջ լռություն – Սաղմ. 31:17, 94:17, Երեմ. 48:2, 49:26
4. կործանման ժամանակ շոկային լռություն – Երեմ. 25:37
5. պատշաճ պահի իմաստուն լռությունը – Սաղմ. 4:4, 62:5, 131:2, Ամոկա 5:13

❖ «Սելա» Տես՝ Սաղմոս 3:2-ի գրառումը:

**4:5** «**ձեր հույսը ՏԻՐՈՋ վրա դրե՛ք**» Սա հաճախ կրկնվող թեմա է (BDB 105, KB 120):

1. Կոչ մեղավորներին՝ Սաղմ. 4:5
2. կոչ հավատարիմներին՝ Սաղմ. 9:10, 32:10, 37:3,5, 40:3, 55:23, 56:4,11, 84:12, 91:2, 112:7, 115:11, 125:1, 143:8, Առակ. 16:20, 29:25, Ես. 26:3-4

3. թագավորը՝ Սաղմ. 21:7, 25:2, 26:1, 28:7
4. հայրերը՝ Սաղմ. 22:4-5
5. Ով ազգեր՝ Սաղմ. 62:8, 115:9
6. քահանաներ՝ Սաղմ. 115:10

ՅԱՀՎԵԻ և Նրա Խոսքի հանդեպ վստահությունն է, որ հույս (տես՝ Սաղմ. 4:3), ուրախություն (տես՝ Սաղմ. 4:7) և խաղաղություն (տես՝ Սաղմ. 4:8) է բերում այս մեղավոր աշխարհում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 4:6-8**

**<sup>6</sup>Շատերն ասում են. «Բարին ո՞վ ցույց կտա մեզ»:**

**Ո՞վ ՏԵՐ, Քո երեսի լույսը մեզ վրա բարձրացրու:**

**<sup>7</sup>Ուրախություն դրեցիր իմ սրտում՝**

**Նրանց ցորենի ու գինու առատության ժամանակից ավելի:**

**<sup>8</sup>Խաղաղությամբ եմ պառկելու ու քնելու,**

**Քանի որ Դ-ՆՆ ես միայն, ո՞վ ՏԵՐ, ինձ ապահովությամբ բնակեցնում:**

**4:6-7** Սաղմ. 4:2-ի պես 4:6-ը սկսում է մի հարցով, որը արտացոլում է սաղմոսերգուի թշնամիների վերաբերմունքը, շարժառիթները և գործողությունները:

Պատասխանը ինդրանք է (*Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ), որ ՅԱՀՎԵՆ «Իր երեսի լույսը բարձրացնի» (տես՝ Թվոց 6:26, Սաղմ. 80:3,7,19): Սա Աստվածության մասին դարձվածք է, որն անձամբ ուշադրություն դարձնի և ողորմություն ցուցաբերի Իր հավատարիմ (Սաղմ. 4:5բ) հետևորդներին (տես՝ Սաղմ. 27:1, Միքիա 7:8): ՅԱՀՎԵՆ՝

1. ուրախություն է դրել սաղմոսերգուի սրտում
2. խաղաղություն է դրել սաղմոսերգուի սրտում
3. ապահովություն է դրել սաղմոսերգուի սրտում

Թվոց 6:26-ում «բարձրացրու» ԲԱՅԸ յՄՁ է՝ BDB 669, սակայն այստեղ՝ յՄԴ (KB 702): Ըստ երևույթին կա միևնույն արմատի երկու ձև (տես՝ BDB 650, KB 702, NET Աստվածաշունչ, էջ՝ 853, #6):

**4:7 «սիրտ»** Տես ստորև տրված Հատուկ Թեման:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ  
SPECIAL TOPIC: THE HEART**

Հունարեն *kardia* տերմինը կիրառվում է Սեպտուագինտայում և ՆԿ-ում նկարագրելու եբրայերեն *leb* (BDB 523, KB 513) տերմինը: Այն օգտագործվում է մի քանի կերպ (տես՝ Bauer, Arndt, Gingrich, *A Greek-English Lexicon, /Հունարեն-անգլերեն բառարան/* pp.403-404):

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը՝ անձի փոխաբերական իմաստը (տես՝ Գործք 14:17, 2 Կորնթ. 3:2-3, Հակ. 5:5):
2. Հոգևոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բարքերը)
  - ա. Աստված գիտի սիրտը (Ղուկ. 16:15, Հռոմ. 8:27, 1 Կորն. 14:25, 1 Թեսաղ. 2:4, Հայտ. 2:23):
  - բ. Մարդկանց հոգևոր կյանքի իմաստով (տես՝ Մատթ. 15:18-19, 18:35, Հռոմ. 6:17, 1 Տիմ. 1:5, 2 Տիմ. 2:22, 1 Պետ. 1:22):
3. Մտավոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բանականությունը. տես՝ Մատթ. 13:15, 24:48, Գործք 7:23, 16:14, 28:27, Հռոմ. 1:21, 10:6, 16:18, 2 Կորն. 4:6, Եփես. 1:18, 4:18, Հակ. 1:26, 2 Պետ. 1:19, Հայտն. 18:7, սիրտը և միտքը ներկայացված որպես հոմանիշներ՝ 2 Կորնթ. 3:14-15 և Փիլ. 4:7):
4. Կամային հատկանիշների կենտրոնը (այսինքն՝ կամքը, տես՝ Գործք 5:4, 11:23, 1 Կորնթ. 4:5, 7:37, 2 Կորնթ. 9:7)
5. Չգացնունքների կենտրոնը (տես՝ Մատթ. 5:28, Գործք 2:26,37, 7:54, 21:13, Հռոմ. 1:24, 2 Կորնթ. 2:4, 7:3, Եփես. 6:22, Փիլ. 1:7)

6. Հոգու գործունեության համար եզակի տեղը (տես՝ Հռոմ. 5:5, 2 Կորնթ. 1:22, Գաղ. 4:6 [այսինքն՝ Քրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17])
7. Միրտը հանդիսանում է ամբողջական անձի փոխաբերությունը (տես՝ Մատթ. 22:37, մեջբերված՝ 2 Օր. 6:5): Մտքերը, նպատակները և գործողությունները, որոնք վերագրվում են սրտին, լիովին հայտնում են անձի անհատականությունը: ՀԿ-ում կան այս տերմինի կիրառության մի քանի զարմանալի օրինակներ՝
  - ա. Ծննդ. 6:6, 8:21, «Աստված տրտմեց Իր սրտում» նաև ստուգեք Ովսեա 11:8-9
  - բ. 2 Օր. 4:29, 6:5, «քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով»
  - գ. 2 Օր. 10:16, «անթլփատ սիրտ» և Հռոմ. 2:29
  - դ. Եզեկ. 18:31-32, «մի նոր սիրտ»
  - ե. Եզեկ. 36:26, «մի նոր սիրտ» հակադրված՝ «քարե սրտի» հետ (տես՝ Եզեկ. 11:19, Չաք . 7:12):

❖ «նոր ցորեն» *UBS Ձեռնարկը* (էջ՝ 47) նշում է, որ Մեռյալ Ծովի Գալարներում երբայերեն MSS է գտնվել, ինչպես նաև LXX և Վուլգատտա թարգմանությունները ավելացնում են «և ձիթայուղը» «ցորեն»-ից հետո և «Նոր գինուց» առաջ, որը հնարավոր է եկել է 2 Օր. 7:13, 11:14, 12:17, 14:23, 18:4, 28:51-ից:

❖ «նոր գինի» Տես՝ ստորև տրված Հատուկ Թեման:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ԱԼԿՈՀՈԼԻՆ ԵՎ  
ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆԸ  
SPECIAL TOPIC: BIBLICAL ATTITUDES TOWARD ALCOHOL AND ALCOHOLISM**

**I. Աստվածաշնչյան տերմինները**

**Ա. Հին Կտակարան**

1. *Yayin* – Սա հունարեն գինի բառի ընդհանուր տերմինն է (BDB 406), որը կիրառվել է 141 անգամ: Ստուգաբանությունը անհայտ է, քանի որ ունի Եբրայերեն արմատ: Այն միշտ նշանակում է թթվեցրած պտղաջուր՝ հիմնականում խաղողի: Տիպիկ սուրբ-գրային հատվածներն են՝ Ծննդ.9:21, Ելից 29:40, Թվոց 15:5,10:
2. *Tirosh* – Սա «նոր գինին» է (BDB 440). Մերձավոր Արևելքի կլիմայական պայմանների պատճառով թթվեցումը /խմորվելը/ սկսում էր հյուրը քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերում է թթվեցման ընթացքի մեջ գտնվող գինուն: Մի քանի տիպիկ սուրբգրային հատվածների համար նայեք 2 Օր.12:17, 18:4, Ես.62:8-9, Ովս.4:11.
3. *Asis* – Ալկոհոլային, որ սա ալկոհոլային ընպելիք է («քաղցր գինի» BDB 779, օր.՝ Հովել 1:5, Ես.49:26).
4. *Sekar* – Սա «ուժեղ խմիչք» տերմինն է (BDB 1016). Եբրայերեն արմատը կիրառվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինում: Այն իր մեջ պարունակում է ավելացված մի բան, որը ավելի է ալկոհոլացնում: Այն *yayin* բառի հոմանիշն է (տես՝ Առակ.20:1, 31:6, Ես.28:7).

**Բ. Նոր Կտակարան**

1. *Oinos* – *yayin* բառի հունարեն համարժեքը
2. *Neos oinos* (նոր գինի) – *tirosh* բառի հունարեն համարժեքը (տես՝ Մարկ. 2:22).
3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) – Թթվեցման սկզբնական փուլում գտնվող գինի (տես՝ Գործք 2:13):

**II. Աստվածաշնչյան կիրառությունը**

**Ա. Հին Կտակարան**

1. Գինին Աստծո պարգևն է (Ծննդ.27:28, Սաղմ.104:14-15, Ժող.9:7, Ովս.2:8-9, Հովել 2:19,24, Ամոլս 9:13, Չաք.10:7):

2. Գինին զոհաբերության մի մասն է կազմում (Ելից 29:40, Ղևտ.23:13, Թվոց 15:7,10, 28:14, 2 Օր.14:26, Դատ.9:13):
3. Գինին օգտագործվում էր որպես դեղամիջոց (2 Թագ.16:2, Առակ.31:6-7):
4. Գինին կարող է իսկական պրոբլեմ լինել (Նոյ՝ Ծննդ.9:21, Ղովտ՝ Ծննդ.19:33,35, Նարադ՝ 1 Թագ.25:36, Ուրիա՝ 2 Թագ.11:13, Ամնոն՝ 2 Թագ.13:28, Հեղի՝ 3 Թագ.16:9, Benhadad – Բենադադ՝ 3 Թագ.20:12, Իշխանները՝ Ամովս 6:6 և Կանայք՝ Ամովս 4):
5. Գինին կարող է չարաշահվել (Առակ.20:1, 23:29-35, 31:4-5, Ես.5:11,22, 19:14, 28:7-8, Ովս.4:11):
6. Գինին արգելված է որոշ խմբի մարդկանց (ծառայության մեջ գտնվող քահանաները՝ Ղևտ.10:9, Եզեկ.44:21, Ուխտավորները՝ Թվոց 6, և իշխանները՝ Առակ. 31:4-5, Եսայի 56:11-12, Ովս.7:5):
7. Գինին օգտագործվում է եսկատոլոգիական միջավայրում (Ամովս 9:13, Հովել 3:18, Չաբ.9:17):

**Բ. Միջաստվածաշնչյան**

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող.31:27-30):
2. Ռաբբիներն ասում են. «Գինին դեղամիջոցներից ամենալավն է, որտեղ չկա գինի, այնտեղ կարիք կա դեղերի» (Baba Bathra 58b):

**Գ. Նոր Կտակարան**

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը վերածեց գինու (Հովհ.2:1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ.11:18-19, Ղուկ.7:33-34, 22:17):
3. Պետրոսը մեղադրվեց «նոր գինով» գինուլցած լինելու մեջ՝ Պենտեկոստեի օրը (Գործք 2:13):
4. Գինին կարելի է օգտագործել որպես դեղամիջոց (Մարկ.15:23, Ղուկ.10:34, 1 Տիմ. 5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահեն գինին: Մա չի նշանակում, որ ամբողջովին զրկվեն դրանից (1 Տիմ.3:3,8, Տիտ.1:7, 2:3, 1 Պետ.4:3):
6. Գինին կիրառվում է եսկատոլոգիական միջավայրում (Մատթ.22:1գ, Հայտն.19:9):
7. Հարբեցողությունը դատապարտված է (Մատթ.24:49, Ղուկ.12:45, 21:34, 1 Կորնթ. 5:11-13, 6:10, Գաղ.5:21, 1 Պետ.4:3, Հռոմ.13:13-14):

**III. Աստվածաբանական հասկացությունը**

**Ա. Բարբառային լարվածությունը**

1. Գինին Աստծո պարգևն է:
2. Հարբեցողությունը մեծ պրոբլեմ է:
3. Որոշ մշակույթներում հավատացյալները պետք է սահմանափակվեն իրենց ազատությունը հանուն ավետարանի (Մատթ.15:1-20, Մարկ.7:1-23, 1 Կորնթ.8-10, Հռոմ.14):

**Բ. Տրված սահմաններն անցնելու հակվածությունը**

1. Աստված է բոլոր բարիքների աղբյուրը:
2. Անկում ապրած մարդկությունը չարաշահել է Աստծուց տրված բոլոր պարգևները՝ դրանք տանելով Աստծո կողմից դրված սահմաններից դուրս:

**Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական արարչագործության մեջ ոչ մի չար բան չկա (տես՝ Մարկ.7:18-23, Հռոմ.14:14, 20, 1 Կորնթ.10:25-26, 1 Տիմ.4:4, Տիտ.1:15):**

**IV. Առաջին դարի հրեական մշակույթը և խմորումը**

**Ա. Խմորումը սկսում է շատ շուտով՝ խաղողը տրորվելուց մոտ վեց ժամ հետո:**

**Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ մակերևույթին թեթև փրփուր է երևում (խմորման նշան), ապա այն ենթակա է գինու տասանորդի (*Ma aseroth* 1:7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:**

- Գ. Սկզբնական ուժեղ խմորումը ավարտվում էր մեկ շաբաթ անց:
- Դ. Երկրորդ խմորումը տևում էր մոտ քառասուն օր: Այս վիճակում այն համարվում էր «հին գինի» և կարող էր մատուցվել գոհասեղանի վրա (*Edhuyyoth 6:1*):
- Ե. Գինին, որը հանգստանում էր իր մրուրի մեջ (հին գինին) համարվում էր լավ գինի, սակայն օգտագործումից առաջ պետք է լավ քամվեր:
- Զ. Գինին համարվում էր պատշաճ կերպով հնեցված, սովորաբար մեկ տարի խմորումից հետո: Երեք տարին ամենաերկար ժամանակն էր, որ կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է նոսրացվեր ջուր խառնելու միջոցով:
- Է. Միայն վերջին 100 տարիներին է, որ ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների շնորհիվ հնարավոր է դարձել խմորման ժամկետը երկարացնել: Հնագույն ժամանակներում մարդիկ չեն կարողացել կանգնեցնել բնական խմորման ընթացքը:

**V. Եզրահանգում**

- Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և սուրբգրային մեկնաբանությունը չի թերագնահատում Հիսուսին և առաջին դարի հրեական/Քրիստոնեական մշակույթը: Նրանք հաստատ լիակատար ժուժկալներ չէին:
- Բ. Ես չեմ պաշտպանում ավոհոլի հասարակական օգտագործումը: Ամեն դեպքում, շատերը չափազանցեցրել են այս թեմայի շուրջ Աստվածաշնչի դիրքորոշումը և այժմ պահանջում են գերազանց արդարություն մշակութային՝ հարանվանական հակվածությամբ:
- Գ. Ինձ համար Հռոմեացիների 14 և 1 Կորնթացիների 8-10 հատվածները ապահովում են իմ հավատակիցների և մեր մշակույթի մեջ ավետարանի տարածման համար սիրո և հարգանքի հիման վրա խորաթափանցություն և ուղեցույց, ոչ թե անձնական ազատություն կամ դատելու քննադատություն: Եթե Աստվածաշունչը հավատքի և ապրելու համար միակ աղբյուրն է, ապա հնարավոր է մենք բոլորս պետք է ևս մեկ անգամ մտածենք այս հարցի շուրջ:
- Դ. Եթե մենք համոզվենք, որ կատարելապես ժուժկալ լինելը Աստծո կամքն է, ապա դրանով ի՞նչ կակնարկենք Հիսուսի մասին, ինչպես նաև այն արդի մշակույթների, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օր.՝ Եվրոպան, Իսրայելը, Արգենտինան):

**4:8**  
**NASB, NKJV**  
**NRSV, REV, NJB**                    **«Քանի որ միայն Դու ես, ո՛վ ՏԵՐ, ինձ ապահովության մեջ բնակեցնում»**  
**NET, JPSOA**  
**(Ժանդազրություն)**            **«Քանի որ, Ով ՏԵՐ, միայն Դու ես ինձ պահում ապահով»:**

- «Միայն» (BDB 94) բառը կարող է վերաբերել՝
  1. Տիրոջը
  2. հավատարիմ հետևորդներին, ովքեր մենակ են քնում (այսինքն՝ թշնամիները ներկա չեն)

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՞ր են «մարդկանց որդիները»: Ինչպե՞ս են նրանք բնութագրվում:
2. Ի՞նչ տարբեր իմաստներ ունի եբրայերեն «իմանալ» ԲԱՅԸ:
3. Բացատրե՛ք Սաղմ. 4:4 ձեր սեփական բառերով:
4. Ովքե՞ր են Սաղմ. 4:6-ի «շատերը»: